# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Ֆիոլետովո, (0322)68941, fioletovo.lori@mta.gov.am

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ

N 139
*29 մարտ 2023թ.*

Հարգելի պարոն Խաչատրյան

Ձեզ եմ ներկայացնում Ֆիոլետովո համայնքի ղեկավարի թիվ 29-35 որոշումները:

Առդիր 1 էլեկտրոնային նյութ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՉԻՉՅՈՎ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնք

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 մարտ 2023 թվականի N 29-Ա

ՀՈՂԱՄԱՍԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին կետով, հիմք ընդունելով Ֆիոլետովո համայնքի բնակիչներ՝ համասեփականատերեր Իոն Յակովլևիչ Նովիկովի, Լյուբով Նովիկովա Միխայլովնաի, Յակով Նովիկով Իոնովիչի, Միխաիլ Նովիկով Իոնովիչի, Տատյանա Նովիկովա Իոնովնաի, Ալեքսեյ Նովիկով Իոնովիչի հողամասից հրաժարվելու մասին դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Ֆիոլետովո համայնքի վարչական սահմաններում գտնվող, Իոն Յակովլևիչ Նովիկովին, Լյուբով Նովիկովա Միխայլովնաին, Յակով Նովիկով Իոնովիչին, Միխաիլ Նովիկով Իոնովիչին, Տատյանա Նովիկովա Իոնովնաին, Ալեքսեյ Նովիկով Իոնովիչին համատեղ սեփականության իրավունքով պատկանող կադաստրային քարտեզի 06-113-0108-0095 ծածկագրում գտնվող 1.4562 հա գյուղատնտեսական խոտհարքը, վկայական 09122022-06-0039, համարել համայնքային սեփականություն և տրամադրել սեփականության վկայական:
2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՉԻՉՅՈՎ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնք

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 մարտ 2023 թվականի N 30-Ա

## ՀՈՂԱՄԱՍԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին կետով, հիմք ընդունելով Ֆիոլետովո համայնքի բնակիչներ՝ համասեփականատերեր Իոն Յակովի Նովիկովի, Լյուբով Նովիկովա Միխայիլի, Յակով Նովիկով Իոնի, Միխաիլ Նովիկով Իոնի, Տատյանա Նովիկովա Իոնի, Ալեքսեյ Նովիկով Իոնի հողամասից հրաժարվելու մասին դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Ֆիոլետովո համայնք վարչական սահմաններում գտնվող, համասեփականատերեր Իոն Յակովի Նովիկովին, Լուբով Նովիկովա Միխայիլին, Յակով Նովիկով Իոնին, Միխաիլ Նովիկով Իոնին, Տատյանա Նովիկովա Իոնին, Ալեքսեյ Նովիկով Իոնին համատեղ սեփականության իրավունքով պատկանող կադաստրային քարտեզի 06-113-0107-0414 ծածկագրում գտնվող 0.0667 հա գյուղատնտեսական խոտհարքը, վկայական 17202049, համարել համայնքային սեփականություն և տրամադրել սեփականության վկայական:
2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՉԻՉՅՈՎ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնք

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 մարտ 2023 թվականի N 31-Ա

ՀՈՂԱՄԱՍԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին կետով, հիմք ընդունելով Ֆիոլետովո համայնքի բնակիչ՝ սեփականատեր Անդրեյ Նովիկով Իոնովիչի հողամասից հրաժարվելու մասին դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Ֆիոլետովո համայնք վարչական սահմաններում գտնվող, սեփականատեր Անդրեյ Նովիկով Իոնովիչի սեփականության իրավունքով պատկանող կադաստրային քարտեզի 06-113-0108-0056 ծածկագրում գտնվող 0.2448 հա գյուղատնտեսական խոտհարքը, վկայական 1720845, համարել համայնքային սեփականություն և տրամադրել սեփականության վկայական:
2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՉԻՉՅՈՎ

ՖԻՈԼԵՏՈՎՈՅԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՀՀ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնք

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24.03.2023 թվականի N 32-Ա

## ՍԵՐՅՈԺԱ ՍԱՄՎԵԼԻ ՍԱՐԴԱՐՅԱՆԻՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որոշման, հիմք ընդունելով Սերյոժա Սամվելի Սարդարյանի հատը.

որոշում եմ՝

1. Սերյոժա Սամվելի Սարդարյանին տալ ՀՀ Լոռու մարզի Ֆիոլետովո համայնքի վարչական տարածքում գտնվող 1-ին փողոց, շենք 146/2 հասցեի կցակառույցի կառուցման նախագծման թույլտվություն:
2. Սերյոժա Սամվելի Սարդարյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՉԻՉՅՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնք

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՄԱՐՏԻ 2023 թվականի N 33-Ա

## ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի դրույթներով, առաջնորդվելով Ֆիոլետովո համայնքի ավագանու 09.03.2023 թվականի «ՀՀ Լոռու մարզի Ֆիոլետովո համայնքի ավագանու 2022թ-ի դեկտեմբերի 27-ի թիվ 154-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 11-Ն և Ֆիոլետովո համայնքի ղեկավարի 09.03.2023թ-ի «Ֆիոլետովո համայնքի 2023թ-ի բյուջեի եկամուտների և ծախսերի եռամսյակային բաշխման մասին,, թիվ 159-Ա որոշումներով՝

*որոշում եմ*

Ֆիոլետովո համայնքի 2023թ-ի բյուջեի ծախսերի եռամսյակային բաշխման մեջ կատարել եռամսյակային փոփոխություն (տեղաշարժ).

1. Կառավարման ապարատի՝ 01.1.1 նախահաշվի 4221 հոդվածի /ներքին գործուղումներ/ VI եռամսյակից 80.0 /ութսուն / հազ. դրամ տեղափոխել I եռամսյակ:

   Համամասնորեն ավելացնել նաև բյուջեի եկամուտների բաժինը փոխադրամիջոցների գույքահարկի պլանը /հոդված 7136/ VI եռամսյակի 80.0 /ութսուն/ հազ. դրամ տեղափոխել I եռամսյակ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՉԻՉՅՈՎ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնք

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24.03.2023 թվականի N 34-Ա

### ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ 06-113-0130-0110 ԾԱԾԿԱԳՐԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով, «Վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 08.04.2004թ. թիվ 443-Ն որոշմամբ, ՀՀ հողային օրենսգրքի 31-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 10.10.2009թ. թիվ 1066-Ն որոշմամբ հաստատված կարգով, հաշվի առնելով հողամասի օգտագործման նպատակահարմարությունը, հիմք ընդունելով որակավորված չափագրող «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿ» ԱՁ-ի կողմից չափագրված հատակագիծը.

որոշում եմ՝

1. Լոռու մարզի Ֆիոլետովո համայնքի վարչական տարածքում գտնվող 06-113-0130-0110 ծածկագրից առանձնացվող 0.068373 հա, ըստ կազմված հատակագծի, գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ 4-րդ կարգի գյուղատնտեսական նշանակության վարելահողի:
2. Հաստատել Ֆիոլետովո համայնքի վարչական տարածքում ընդգրկված ՀՀ կառավարության 08.04.2004թ. թիվ 443-Ն որոշմամբ համայնքային սեփականություն հանդիսացող 06-113-0130-0110 ծածկագրից առանձնացված 0.068373 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողի սահմանները համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:
3. Հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հողամասի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և /կամ/ չի առաջացնում սերվիտուտ:
4. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
6. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՉԻՉՅՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնք

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29.03.2023 թվականի N 35-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Ֆիոլետովո համայնքի վարչական տարածքում գտնվող 06-113-0028-0042 ծածկագրի բնակելի կառուցապատման հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Ֆիոլետովո համայնք 1 փողոց, տուն 87:
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա պետական է գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՉԻՉՅՈՎ